



*Հ.Մ.Ա.Կ.- Ի  
40- րդ Համահայկական  
Խաղեր*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Թեհրան 2008  
Արարատ Մարզալան



**ՄՐՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ**  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ**

**Ա-Ընդհանուր**

- 1) Միայն հայկական ծագում ունեցող անձերը կարող են մասնակցել սոյն խաղերին:
- 2) Իրաքանչիւր մարզիկ, կարող է մասնակցել առաւելագոյնը երեք մարզաճիւղի մրցութիւններին ( մէկ խմբային և 2 անհատական ):  
**Ծանօթ:**Մրցութիւնների զուգադիպման պարագային որևէ ծրագրի փոփոխութիւն նկատի չի առնւելու:
- 3) Համահայկական խաղերին մասնակցող բոլոր մարզիկները պետք է մինչև մրցութիւնների բացման օրը, բոլորած լինեն 14 տարեկան տարիքը: Բացառութիւն են կազմում ճատրակի, թենիսի և լողի մրցութիւններին մասնակցողները:
- 4) Միութիւնները յանձնառու են կցւած ժամանակացոյցի համաձայն ներկայացնել իրենց միութեան այն պատժւած մարզիկների անւանացանկը, որոնք չեն կարող մասնակցել սոյն Համահայկական խաղերին, որպէսզի նման մարզիկների անունները չներկայացւեն այլ միութիւնների կողմից: Հակառակ պարագային յանձնախումբս որևէ պատասխանատուութիւն չի ունենայ:
- 5) Մասնակցող միութիւնները պետք է նամակով ներկայացնեն իրենց ընդհանուր պատասխանատուին ըստ կցւած ժամանակացոյցի:
- 6) Մրցութիւններին մասնակցող միութիւնների պատասխանատուները, իրենք անձամբ պետք է ստանան մրցութիւնների ծրագրերը:

**Ծանօթ:**Մրցութիւնների ամբողջ ընթացքում(ի բացառեալ խաղերի ընթացքի որոնց դէպքում կը կիրառուի նոյն մարզաձևի կանոնները) մարզիկների, մարզիչների կամ պատասխանատուների անկարգապահ գործողութեան



դէպքում դատական խորհրդի որոշումով կը տուգանւի պատկան միութիւնը:

Տուգանքի գումարը կը գանձուի վերոնշեալ պահի գումարից:

7) Իւրաքանչիւր մարզիկ կարող է մասնակցել միայն մէկ միութեան կողմից:

**Ծանօթ:**Տարբեր միութիւնների կողմից ներկայացուած միևնոյն մարզիկը կը համարուի այն միութեան անդամը, որի անունից կը մասնակցի իր առաջին մրցութեանը:

### Բ-Արձանագրութիւն

8) Իւրաքանչիւր մարզիկից գանձուելու է արձանագրութեան գումար որպէս ապահովագրութեան և մասնակցութեան քարտի վճարում: (Ապահովագրութեան քարտ ունենալու պարագային պէտք է ներկայացուի ապահովագրուածների ցանկը):

9) Թեւրանի միութիւններից մասնակցող խմբերի գանձումները կը կատարուեն ըստ պատգան շրջանի պայմանների համաձայն:

**Ծանօթ:**Դիմումագրերը ժամկետից ուշ ներկայացնելու և քարտերի ուշ պատրաստուելու պարագային, խումբը կըզրկուի առաջին խաղից:

10) Լրացուած դիմումների յանձնման եւ քարտերը ստանալու ժամկետները ճշտուած են կցուած ժամանակացոյցում:

**Ծանօթ:** Բացման օրը և մրցութիւնների ընթացքում քարթ չունեցող մարզիկները պէտք է մուտքի տոմս գնեն:

### Գ-Մրցութիւններ

11) Մասնակցող իւրաքանչիւր խումբ, պարտաւոր է յայտարարուած ժամին պատրաստ վիճակում, ներկայ գտնուելու մրցավայրում:

Առաւօտեան և կէսօրից յետոյ տեղի ունեցող միայն առաջին խաղերի համար, նկատի կը առնուեն 15 րոպէ ժամանակամիջոց, իսկ մնացեալ մրցութիւնները, կըշարունակուեն ըստ ծրագրի՝ առանց որևէ ժամանակամիջոց նկատի առնելու:

Նշանակուած ժամից ուշ ներկայացած և բացակայ խմբերը պարտուած կը յայտարարուեն:



12) Որևէ խումբ ( կամ անհատ՝ անհատական խաղերից ) առաջին անգամ բացակայելու պարագային, պարտուած կը համարւի, իսկ երկրորդ անգամ դուրս կը դուրի մրցութիւնների աղիւսակից:

13) Որևէ խումբ իր ներկայացրած մարզիկների ցանկից դուրս ուրիշ մարզիկներից օգտուելու պարագայում այդ մրցութիւնը պարտուած կը համարւի :

14) Բոլոր մարզիկները, խաղերի ընթացքում, պէտք է ներկայ լինեն մարզական զգեստով, հակառակ դէպքում կը զրկւեն պատկան մրցութեանը մասնակցելու իրաւունքից:

15) Բոլոր մարզիկները, մրցութիւնների ընթացքում, իրենց հետ պէտք է ունենան մրցութիւններին մասնակցելու և ապահովագրութեան քարտերը:

16) Խմբի պատասխանատուն, պարտաւոր է 30 րոպէ նախքան մրցութեան համար յայտարարուած ժամը, ներկայ գտնուելու իրաւարարների սեղանի մօտ՝ խմբի մարզիկների քարտերը և անւանացանկը յանձնելու համար:

17) Որևէ մարզիկ, մրցութեան ընթացքում իրաւարարի կողմից դուրս դուրելու պարագայում՝ իր նկատմամբ մօտեցում կը ցուցաբերւի պատկան մարզաձևի օրէնքների համապատասխան:

18) Խմբային մրցութիւնների ընթացքում, որևէ հարց կարող է ներկայացնել միայն խմբի պատասխանատուն:

19) Որևէ մարզաճիւղում մասնակցող խմբերի թիւը 3- ից պակաս լինելու դէպքում, այդ մարզաճիւղի մրցութիւնները չի կատարւի:

20) Նիշերի ընդհանուր հաշւարկման մէջ, իւրաքանչիւր խմբի վաստակած նիշերը նկատի են առնուելու հետևեալ կարգով՝

**Ա.( ֆուտբոլ- բասկետբոլ- վոլէյբոլ )**

Ոսկէ շքանշան	7 նիշ
Արծաթէ շքանշան	5 նիշ
Բրոնզէ շքանշան	4 նիշ



**Բ.( թեթև ատլետ- լող )**

Ընդհանուր մարզաձևերի արդիւնքներից, կը որոշւեն ընդհանուր նիշերը:

Ընդհանուր Առաջին	7 նիշ
Ընդհանուր Երկրորդ	5 նիշ
Ընդհանուր Երրորդ	4 նիշ

**Գ.( Պինգ- պոնգ և Թենիս )**

Խմբային և անհատական մրցութիւնների արդիւնքներով, կը որոշւեն ընդհանուր նիշերը:

**Դ. ( Ճատրակ )**

Ճատրակի ընդհանուր խմբի նիշերը, կը որոշւեն առաջինից մինչև 15-րդ շահող անհատների միջև:

21) Խաղերի վիճակահանութիւնները, ըստ մրցութիւնների և ժամերի, տեղի են ունենալու «Արարատ մարզաւանում ըստ կցւած ժամանակացոյցի:

**Դ-Կարգապահական**

22) Իւրաքանչիւր միութիւն որպէս կարգապահութեան պահ պէտք է վճարի ըստ պատգան շրջանի պայմանների համաձայն:

23) Իւրաքանչիւր մրցութեան ընթացքում, մարզիչն ու պատասխանատուն պարտականութիւն ունեն պատկան խմբի կամ մարզիկի հետ ներկայ գտնւելու մրցավայրում և պատասխանատութիւն կրելու՝ խմբի կամ մարզիկի կեցւածքի համար:

**Ծանօթ:** Որևէ խումբ կարող է մրցութեան մասնակցել, երբ իր հետ ունի պատկան մարզիչին կամ պատասխանատուին:

24) Մրցութիւնների ժամերից դուրս, բոլոր պատասխանատուները, մարզիչները և մարզիկները իրենց կեցւածքի համար պատասխանատու են խաղերի Յանձնախմբին:

25) Որևէ միութիւն մրցութիւնների ընթացքում բողոք ունենալու պարագային, գրաւոր բողոքը՝ պատկան մրցութիւնից յետոյ առաւելագոյնը մինչև 24 ժամ, միութեան ընդհանուր պատասխանատուի միջոցով, պէտք է



յանձնի յանձնախմբին՝ ճշտած բողոք յանձնելու գումարը և ստանալով վճարման ստացականը:

Բողոքը իրաւացի նկատւելու պարագայում՝ գումարը կը վերադարձի:

**Ծանօթ:** Դատական խորհուրդը, մինչև 24 ժամ, բողոքի քննարկման պատասխանը գրաւոր կը յանձնի խաղերի յանձնախմբին և բողոքը ներկայացնող Միութեանը:

26) Բոլոր հակակարգապահական արարքները, որոնք յանձնախմբին կը զեկուցեն մարզաձևերի պատասխանատուների, իրաւարարների, կարգապահների, կամ բանակումի պատասխանատուի կողմից, ինչպէս նաև խմբերի մարզիչների և պատասխանատուների բողոքագրերը, վերահասութեան համար կը յանձնուեն Համահայկական մրցութիւնների յանձնախմբին, իսկ յանձնախումբս պատկան հարցի վերահասութեան նպատակով համապատասխան դատական խորհուրդ կեանքի կը կոչի:

27) Բոլոր միութիւնների պատասխանատուները և մարզիկ-ուիհիները, պարտաւոր են մասնակցելու բացման արարողութեան տողանցքին:

**Ծանօթ1:** Մարզիկները տողանցքի ընթացքին պէտք է ունենան միաձև յարմար հագուստ:

**Ծանօթ2:** Տողանցքի և բացման արարողութեան ընթացքին անկարգապահ մարզիկները խստօրէն կը պատժեն:

28) Սոյն կանոնագրութեան մէջ չնախատեսուած խնդիրները կը վճռահատուեն համաձայն երկրի մարզական և մրցաշարերի օրէնքների:

Հ.Մ.Ա.Կ.-ի  
Համահայկական  
Խաղերի Յանձնախումբ